ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԽԱՉՎԱԾ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉԸ

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին,
Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,
Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Լույս է տեսել Մկրտիչ Սարգսյանի ջավախքյան թեմաներով գրված ստեղծագործություններն ամփոփող «Դեպի լեռան Աբուլ» գիրքը[1], որը հրատարակության է պատրաստել գրողի որդին՝ Վահագն Սարգսյանը, նշելով, որ հրատարակությունը նվիրվում է հեղինակի ծննդյան 90-ամյա հոբելյանին: Նախաբանը գրել է «Միտք» վերլուծական կենտրոնի փորձագետ Վահե Սարգսյանը:

Գիրքն իր համահավաք ամբողջականությամբ նվիրումի մի յուրօրինակ դողանջ է, մտքի ու հույզի թանձրույթով չափագծված ջավախքյան մի դիմապատկեր, որ ասես արևելյան գորգերի վառվռուն գույներով բացապարզվում ու ներառում է այնտեղ ապրած ու ապրող մարդկանց խինդն ու պառապանքը, թախիծն ու հրճվանքը, դժվարությունների դեմերես կանգնելու կամքն ու կորովը, լեռների հառաչանքն ու հողի սրբությունը, անցյալի խիզախումների խճանկարը, բարձրագահ Աբուլի ու Մըթին սարերի վեհությունը...

Գրքում զետեղված գործերը բոլորիս կամ գրեթե բոլորիս են ծանոթ ու վաղուց են արժևորված, բայց կարևոր արժևորումն այս պահին երևույթն է, մեկ հայացքով պարագծված ստեղծագործությունների համահավաք խորհուրդը, գրողի խղճի ու սիրո ներանձնական շաղախը, որ պաղանդավոր գրչի արարումով ամբողջանում, գուլալվում ու գեղարվեստ է դառնում բոլորիս համար: Եւ ինչ սեր է, հող ու ջրի, քար ու թփի հանդեպ ինչ պաշտպամունք ու նվիրում, որի համար խաչված քաղաքի խաչված ճակատագրերով մարդկանց հոգիները արժանապատվության համար մղվող կռիվներից հաղթանակած ելնում ու երկինք են համբառնում: Երկինք են համբառնում, որ

---

1 **Մկրտիչ Սարգսյան**, Դեպի լեռան Աբուլ, Երևան, 2012:

մեր երկիրը մեզ համար երկիր դառնա, արժանապատվության դրոշ ու լինելության խաչքար դառնա, երկիր, որի օրորոցում ծնված երեխան խաղաղ մանկություն ունենա, իր գլխին ծնողի ներկայություն ու օրհնություն ունենա, վաղվա օրվա խորհրդով կերպարավորված ջլապինդ կորովը նախապապերի շիրիմների մասին եղած հիշողություններով զորեղանա: Հետևում ես գրողի մտքի եւ երեւակայության ընթացքին եւ պատկերների տեսանելի շքերթում տեսնում այլեւս անտեսանելին, լսում՝ անլսելին. դա նրա սերն է, իր ծննդավայրի մարդկանց կենսագրությունը որպես սեփական կենսագրություն ապրելու խաչը, իր հող ու ջուրը սրբացնելու մղումը, կարոտի փիեզերաձավալ բռնկումը... Մեր խոսքի լավագույն վկայությունը նրա՝ «Սիրո խոսք եւ ոչ միայն...» գրվածքն է, որտեղ նա գրում է. «Ինձ բախտ է վիճակվել Վիրահայոց լեռներից մինչեւ Խըրթըզի (Խերթվիսի) տարածքը, ուր Կուր ու Թափարվան գետերը գրկում են իրար, եւ Տաբածղուրի լճից մինչեւ Կարծախի Խոզապին լիճը, այսինքն՝ Ջավախքի ողջ տարածքը հյուսիսից հարավ եւ արեւելքից արեւմուտք շրջել ոտքով ու տեսնել շքեղ ու գեղեցիկ լեռնաշխարհի իմ հայրենակիցների քրտնաթոր աշխատանքը, հպարտանալ, թե ինչպիսի՛ սիրով է հայ գյուղացին գուրգուրում եւ հերկում դժվարին, հեշտ չտրվող հողն ու հավաքում բերքը, եւ ինձ երբեք չի լքել Ջավախքի անասնապահի, հողագործի, շինարարի առջեւ ծունկի գալու եւ նրանց կոշտ ու հացարեր ձեռքերը համբուրելու ցանկությունը, լսել նրանց փառապանքի եւ ուրախության երգերը: Այո, ջավախքեցին գիտի աշխատել, գիտի շենացնել իր շեներն ու օջախները»:

Եւ ահա հենց այդ սիրո եւ կարոտի մղումն է, որ նրան, հեռավոր 1949 թվականին, մի խումբ ընկերների հետ, Աբուլ սարի գագաթն է բարձրացնում: Գրողը մեզ հիշեցնում է, որ յուրաքանչյուր տարվա օգոստոսի երկրորդ կիրակի օրը Ջավախքի եւ հարեւան շրջանների հայերը բարձրանում են Աբուլի գագաթը՝ ուխտագնացության, այդ մեծ բարձրության վրա գտնվող հարթ եւ բարձրադիր քարին մոմ են վառում, մատաղում են ոչխար ու թռչուններ: Իսկ գագաթից, ուր ուխտավորները հասնում են արեւի ծագելուց հինգ-տասը րոպե առաջ, հեքիաթնե՛ր են բացվում չորս կողմը, նախ՝ արեւածագը... «Ոչ, դուք նման արեւածագ չեք տեսել, - տեսիլքի ծիրում հայտնվածի կախարդանքով բացականչում է գրողը: - Ծագման պահին արեւը կարմիր, կարմիր է եւ տեսանելի դանդաղությամբ պտտվում է կարմիր անիվի պես: Որքան բարձրանում է, այնքան առատանում է ոսկեգույնը, արեւայինը, եւ նվազում է կարմրագույնը: Իսկ երբ արեւը դառնում է փիեզերքի տերը, նա մեր ծանոթ, իմացած արեւն է, որ լուսավորում է աշխարհն ամբողջ եւ հայտնագործում հեռու ու մոտ գեղեցկությունները... Հյուսիսում սպիտակ, լայն շերտով ընդգծվում է Կովկասյան լեռնաշղթան իր երկնամերձ գագաթներով: Արեւմուտքում մշուշի տակից կապտում է Սեւ ծովը, արեւելքում՝ ոսկեգույնից իր քառագագաթ գլուխն է հանում Արագածը (Ցավոք, Աբուլից չի երեւում Արարատը: Արագածը գոցում է նրան): Հարավում, ոչ շատ հեռվում ծփում է Չլդրը լիճը, իսկ ոտքերիս տակ Փարվանան շարունակում է իր լեգենդը...»:

Եւ, իհարկե, այդ ամենը տեսնելուց հետո արձակագիրն ու բանաստեղծը պիտի գրեր.

Ասում են, թե Արուլը
Մասսի հասակը ունի,
Չյունեղեն թագը նրա,
Ճերմակ թասակը ունի,
Նրա նման բարձրագահ,
Ամպերից վեր առ Աստված,
Շղթաները խորտակող
Քաջաց դասակը ունի...

Կարդում ես գիրքը՝ բանաստեղծություններ, նովելներ, պատմվածքներ, վիպակներ, վեպ, հուշեր, գրական խորհրդածություններ, վրձնահարվածներ ու դիտարկումներ, խոհեր, սրտի անկեղծ խոսքեր..., եւ ինչ-որ մի վերերկրային հմայումով աչքերիդ առջեւ ասես փռված տեսնում ես Ջավախքի ծաղկած մարգագետինները, ուր հազարավոր ծաղիկներ թել-թելի տված վառվռուն գորգ են հյուսում, եւ այդ ծաղիկների մեկտեղված բույրը ելնում ու ժողովրդի շնչի հետ միախառնվելով բարձրանում, հասնում է մինչեւ Աստծո կացարանը:

Եղեւնու սարը՝ ծաղիկը շուրթին,
Թափարվան գետի տաղիկը շուրթին,

Անտառում քեֆի նստելը բախտ է,
Կանաչ անտառը իրոք դրախտ է...

Դուդուկն է լալիս, ա՛խ, դլե յաման,
Երգը դարձել է հոգու հրաման,

Ասես Աստված էլ նստել է քեֆի,
Նա էլ հարբած է ինձ պես երեւի...

Ահա Խաս բախչա կոչված քաղաքային այգին, աշխարհի թախիծը ցրող նվագախումբը, համերգների եւ հանդիսությունների, քեֆերի ու ուրախությունների համն ու հոտը տեղը բերող նվագողների կվարտետը՝ հռչակված կլարնետիստ Սամսրցի Հարութը, թառիստ՝ նշանավոր աշուղ Հավասին, դհոլչի՝ Ճնճղուզենց Թաթոսը եւ հիանալի ջութակահար՝ Աշոտը, որի համբավը ճեղքել է Ջավախքի լեռները եւ դուրս եկել նրա սահմաններից: Այդ աղմուկի միջից գալիս մեզ է հասնում այգու ծառուղիներում

արյան ջերմությունից շիկնող սիրահար զույգերի՝ հեքիաթի պես հյուսվող քչփչոցը, հուշերի մեջ թնջկված ծերունիների թելթռուց զրույցը, երաժիշտների հետ հաղորդակցվելու նրանց կերպը.

- Աշուտ ջան, հոգիդ ուտեմ, մե հատիկ բայաթի Քուրդ չալե...

- Մատներդ ուտեմ, տասնոցը բռնե, թող չարդ տանի:

Եւ անցյալը դառնում է ներկա, մեր անվարտիք ժամանակների դիմակավոր երեսը լուսապսակվում է անցյալի նամուսով, եւ ապրելը դառնում է ցանկալի, մեռնելը՝ արժանապատիվ... Որովհետեւ բացվող առավոտների զվարթության ու արեւամարքի շշուկներում հյուսածո առկա է տողի կախարդանքը, եւ մենք վկան ենք այդ կախարդանքից արտաբերված մի ընթացքի, որ կոչվում է գրողի ճակատագիր, ճակատագիր, որ լույսի խորհրդով է չափագծված, վավերացված Մկրտիչ Սարգսյան անունով, որ իր ճանապարհին փռված դարուփոսը իր մարդ լինելու վեհությամբ, գրող լինելու խաղաղությամբ ու իր բարությամբ էր հարթեցնելու:

Ահա եւ Կնուտ Խաչոն՝ միշտ մաքուր ու միշտ ներկված, բայց իր դարն ապրած կառքով: Կառքը կա, բայց նստող չկա, կառքի մասին Խաչոյի զովասանքն ու հիշողությունն է մնացել՝ ինչ հարսներ ու հարսանիքներ է տեսել կառքը, ինչ ուրախություններ ու քեֆեր, ինչ ճամփաներ ու արկածներ... Խաչոն, իր ասելով, այդ կառքով փրկել է Վահան Տերյանին:

- Դուք Վահան Տերյանին գիտե՞ք, - հարցրեց հանկարծ Խաչոն:

- Գիտեմ, - ասաց տարեց մարդկանցից մեկը:

- Մեծ աշուղ է, - Կնուտ Խաչոյի դեմքը լուսավորվեց: Խոսակիցը ծիծաղեց:

- Ինչի՞ կինդաս:

- Վահան Տերյանը բանաստեղծ է:

- Ի՞նչ իմանամ, բանաստե՞ղծ է, թե՞ աշուղ: Բանաստեղծն ի՞նչ է, - հարցրեց:

- Շատ ավելի գրագետ, կրթված աշուղ:

- Ապրի արեւդ: Վահան Տերյանը մեծ մարդ է, չէ՞... Իմացիր, ես էդ մեծ մարդու կյանքը փրկել եմ:

Ու պատմում է Կնուտ Խաչոն, որ տասնութ թվականին բանաստեղծը եկել է Ախալքալակ ու բոլշեւիկյան ելույթ ունեցել կայազորի առջեւ: Մենշեւիկյան հեծելազունդը ծափերով է ընդունել նրա ելույթը: Վահան Տերյանը պատմել է հեղափոխության մասին, Լենինի մասին: Խաչոյի կառքը կանգնած է եղել ձորում՝ բոստանների դիմաց: Սպաները փորձել են կալանավորել բանաստեղծին, բայց կոմունիստները փախցրել են նրան, իջեցրել ձորը, ուր կանգնած է եղել Խաչոյի կառքը:

«Ֆայտոն նստավ թե չէ, - պատմում ու ոգեւորվում է Խաչոն, - ձիերին էնպես զարկի, որ թեւ առան - թռան: Ձորով տարա Դիլիսկա գեղ, գիշերը մնաց էնտեղ, առավոտ լուսուն փախցրինք Գանձա, հայրական օջախ: Հիմի տեսար չէ՞, թե ինչ հնարքով ֆայտոնչի Խաչոն էդ մարդուն փրկեց... Բայց հիմի մեկը չկա, որ ինձի փրկե էդ անտեր մաշինի ձեռքեն: Գործս գողցավ, գործս եր-եր կերթա, նալոգս՝ առաջ...»:

Եւ այսպես՝ նովելից-նովել ու պատմվածքից-պատմվածք, իրար հետեւից, համով պատմություններ է պատմում գրողը, եւ մենք տեսնում ենք իր հոգս ու ուրախության վրա գլուխը կախ, արդար ու շիտակ, իր մի պատառ հացը հարեւանի հետ կիսող, աշխատող ու արարող ջավախքցուն: Սարգսյան գրողը էությամբ, իր ոսկրածուծով գիտե Ջավախքն ու ջավախքցուն, դրա համար էլ նրա գրած ամեն մի տողը Աբուլի ձյուների նման մաքուր է ու տեսանելի, բարություն ու լույս է ճառագում: «Ինչ տղա էի, Է՛, առյուծի ձագ..., - Փչան Եղիշն է, - Անդրանիկ փաշան ինձի մատով ցույց կուտար, կըսեր՝ Եղի՛շ, լուսադեմին ծանտրը կռիվ կլինի, գնա մի թուրքի ասկյար գողցիր, բեր թշնամու գաղտնիքն իմանանք, թե չէ տղերքը մեղք են, կընկնեն գյուլլի բերան, մահի փայ կդառնան... Ես էլ կերթայի, կառնեի, կուգայի...»:

Գրքի առանցքային գործը, անտարակույս, «Խաչված քաղաքը» վեպն է: Հայտնի է, որ Ջավախքի բնակչության 1918-1920 թթ. մղած պայքարը թուրքական բանակի եւ նրան ընկերացած թուրք խուժանի դեմ, մեր ժողովրդի պատմության ամենառողբերգական եւ ամենահերոսական էջերից է: Այդ ցավոտ թեման միշտ էլ հուզել է Մկրտիչ Սարգսյանին, եւ 1991 թ. նրա գրած «Խաչված քաղաքը» վեպը մի յուրօրինակ գեղարվեստական պատում է (թեեւ հերոսների զգալի մասը իրական կերպարներ են) 1918 թ. ջավախահայության այդ դաժան, ողբերգական ու միաժամանակ հերոսական ժամանակների մասին: Իրավիճակի ողբերգականությունն ընկալելու համար դիմենք պատմությանը:

1917 թ. ռուսաստանյան հեղափոխությունների անհանգիստ օրերն են: Փլուզվում է երբեմնի հզոր ռուսական կայսրությունը, ժամանակավոր կառավարության ձեռնարկումներն ի զորու չեն կասեցնելու լայնածավալ տերության հետագա գահավիժումը: Օգտվելով Ռուսաստանում ստեղծված քաոսային իրավիճակից՝ առաջին համաշխարհային պատերազմում պատմության նախաշեմին հայտնված գերմանական բլոկի երկրները կրկին անցնում են հակահարձակման: Ի թիվս բազմաթիվ հայկական գավառների, թուրքական արշավանքի վտանգի առջեւ է կանգնում նաեւ Ախալցիխայի եւ Ախալքալակի հայությունը: 1917-ի դեկտեմբերին Ախալցիխայի բնակչությունը հայտնի դաշնակցական գործիչ Զորի Զորյանի գլխավորությամբ դիմում է հերոսական ինքնապաշտպանության, որի արդյունքում տասնյակ հազարավոր հայեր ու վրացիներ փրկվում են ֆիզիկական բնաջնջումից: Ցավոք, Ախալքալակի գավառում զանազան օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով անկարելի է դառնում կազմակերպված դիմադրությունը, եւ բնակչությունը հարկադրված, տեղում թողնելով գույքը, դաշտերում՝ հասած հացահատիկի հարուստ բերքը, բռնում է գաղթի աղետալի ճանապարհը: Գավառի հարավային եւ հարավ-արեւելյան գյուղերի բնակչության մեծ մասն արտագաղթում է դեպի Ծալկա, իսկ քաղաքի եւ հյուսիսային բնակավայրերի հայությունը՝ Բակուրիան: Վրացական իշխանությունները զանազան անհիմն պատճառաբանություններով արգելում են հայ բնակչության մուտքը Վրաստանի

տարբեր շրջաններ եւ զենքի ուժով ստիպում հանգրվանել Բակուրիանի անհրապույր անտառներում: Հայտնվելով գավառ ներխուժած թուրքական զորքերի եւ Բորժոմի ճանապարհը հսկող վրացական զինված ջոկատների միջեւ՝ սովի, համաճարակների, մշտական հարձակումների հետեւանքով, մինչեւ նոյեմբեր մոտ 80 հազ. հայ գաղթականների ավելի քան 40-45 տոկոսը ոչնչանում է:

Սակայն «Խաչված քաղաքը» վեպում Մկրտիչ Սարգսյան արձակագիրը, գաղթի ու կոտորածի արհավիրքը շրջանցելով, գնում է դեպի լինելության որձաքարը, պայքարի ու հերոսացման, վրեժխնդրության ու արյան հիշողությամբ թեժացած հոգեբանական դարսածալքերը, պատմում է այն մի բուռ հայերի մասին, ովքեր մնացին ավերված ու պարտված քաղաքում եւ ելան անհավասար ու անհեռանկար պայքարի թուրքական գնդի դեմ: Նրանք հերոսության ու քաջության արտառոց օրինակներ ցույց տվին: Կանոնավոր բանակի դեմ մղվող մարտերից փրկվեցին գլխից ու կյանքից ձեռք քաշած մի բուռ դոնկիխոտներ, որոնց մեծագույն հերոսականության շնորհիվ, այնուամենայնիվ, ինչ-որ չափով դանդաղում կամ կանգ էր առնում հայեր աղացող հողմնաղացների աշխատանքը, եւ որոնցից ընդամենը 6-7 հոգու հաջողվեց փրկվել:

Վեպի հերոսուհին՝ գեղեցկուհի Եղիսաբեթ Սիրունյանը՝ Զերեթ մականունով, իր ամուսնու՝ ազգությամբ բուլղար Սերգեյի հետ Ախալքալակի պաշտպանության կոմիտեի կողմից ուղարկվում է շրջակա գյուղերը՝ տեղում իրավիճակին ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով: Դրանք այն գյուղերն են, որոնց բնակչությունը ելել է ինքնապաշտպանական մարտերի: Իսկ լքված գյուղերում թալան է: Ահա մի հատված վեպից. «Թուրքի խուժանը, ո՛րը ձիով, ո՛րը սայլով, ո՛րը հետիոտն, Թափարվանի ձորով դանդաղ շարժվում էր դեպի թուրքական գյուղերը՝ իր հետ տանելով ահռելի քանակությամբ կողոպուտը: Նման դեպքերում կողոպտիչների տրամադրությունը բարձր է լինում: Երեկվա աղքատը, ընչազուրկը, մանավանդ սրիկան, մեկ օրվա ընթացքում դառնում է հարուստ մարդ: Ձորն ամբողջապես լցված էր սայլերով, անասուններով: Հարյուրամյակների ընթացքում կուտակված արդար վաստակի արդյունքները քշում էին դեպի թուրքական գյուղերը: Թալանողներն ամենից առաջ ավելի մտահոգված էին անասուններով, որոնք քանի որ իրենցը չէին, քանի որ տեր ու անասուն իրար չէին ճանաչում, շատերին թվում էր, թե իր թալանը խառնվել էր ուրիշներին եւ ողջ ճանապարհին կռվում էին իրենց ընկերների հետ, ծեծկռտում միմյանց, նույնիսկ դաշունահարում, սպանում իրար:

Կորխի կամուրջին չհասած, բռնկվեց տուրուդմբոց, որի պատճառը բոլորովին էլ անասունները միմյանց խառնվելու կամ իրարից գողանալու առիթը չէր: Թուրք դոչիների մի ստվար խումբ ցանկացավ դառնալ այդ ամբողջ հարստության տերը, առանց ժամանակ կորցնելու անցավ կողոպտիչներին կողոպտելուն: Ձորում լսվեց նրանց վերջնագիրը.

- Բոլորդ թողեք ձեր ունեցվածքը եւ վերադարձեք գյուղերը՝ նոր թալան բերելու: Չենթարկվողները կգնդակահարվեն անմիջապես...

Հարձակվող կողմը քանի որ գործում էր ավելի միասնական եւ նպատակասլաց, սկսեց կամաց մարդկանց բազմությունը հրել դեպի Կորխ գյուղի ձորում գտնվող փայտե կամուրջը: Հենց այս կամուրջի վերեւ բարձրացող ժայռի վրա դիրքավորված Սեւ Արսենի խումբը սպասում էր կողոպտիչներին:

- Ի՞նչ անենք, Արսեն, - հարցրեց Թ-խպոտ Հովոն:

- Քանի կամուրջին չեն հասել՝ պայթեցրու, հետո ուշ կլինի...

Հովոն առանց առարկության վառեց քուղը, եւ կրակը վազեց առաջ: Կռվող թուրքերն իրար ծվատելով մղվում էին դեպի կամուրջը: Մյուս կողմից, վառվող քուղը կրակե օձի նման արագորեն սողում էր դեպի կամուրջը: Կռվողներն ավելի շուտ հասան կամուրջին եւ... Ահեղ դղրդոցով կամրջի հետ միասին համբարձվեցին երկինք...»:

Այս բացապարզ փեքսպում բնավորվածը թալանի համին ընկած թուրքի քարանձավային բնազդն է, որ իր սեւամաղձ խորքում թանձրանալով ու թեւավորվելով, ոչ մի արգելքի առջեւ չի կանգնում. երկու թալանչի եղբայրներն անգամ զենքի ուժով իրար թալանում են, որովհետեւ դա նրանց ապրելու կերպն է, լինելության իմաստը, գոյատեւելու մղումը...

Բայց եկեք թուրքին թողնենք իր թրքության հետ եւ դառնանք մեր քրիստոնյա վարքին ու գնահատման առումով հավելենք. մեծ հետաքրքրությամբ են ընթերցվում նաեւ գրողի՝ դասականներին նվիրված գրական խորհրդածությունները՝ «Հայրենաշունչ քնար» (աշուղ Ջիվանի), «Հոգիների թարգմանը» (Վահան Տերյան), «Դերենիկ Դեմիրճյանը եւ նրա դասերը», «Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազարը», «Ակամա երգիծաբաններ» հուշերի գրքից՝ «Դերենիկ Դեմիրճյանը՝ պարտապետ», «Ավետիք Իսահակյանը Դերենիկ Դեմիրճյանի մասին», «Հնարամիտ Դերենիկ Դեմիրճյանը», «Խանդոտ Դեմիրճյանը», «Ավետիք Իսահակյանը Ախալցխայում», «Հավասու երգը»... Գրողը երգի մասին անգամ գրում է այնպես, ինչպես կգրեր երգի հեղինակի մասին: Եւ ահա Ջիվանու «Ձախորդ օրերը» երգի 100-ամյակի առթիվ գրում է. «Մեկ դար է, որ այս երգը ժողովրդի շուրթին է, նրա ուղեկիցը, մասնակիցը նաեւ նրա ուրախություններին եւ փխրություններին, մխիթարողը նկուն հոգիներին, սատարող մարդուն՝ անկման պահերին: Եղբոր հարազատությամբ կանգնելով մարդու կողքին՝ սրբում է սգավոր արցունքները, հույս ներարկում անհուսության մեջ դեգերող հոգուն, դառնալով փրկության ափ՝ նավաբեկյալին եւ կյանքի կործանարար ալիքներին պարուրերվող անհատի համար. մռայլ եւ թանձր ամպամածությունը՝ հույսի ու լույսի թեկուզ եւ փոքր, բայց փրկարար մի շողով թուլացնում, նոսրացնում ժայռեղեն մթությունը եւ հոգի ծվատող տագնապը»:

Իսկ «Ավետիք Իսահակյանը Ախալցխայում» մանրապատումը ներկայացնելու գայթակղությանը պարզապես դժվար է դիմանալ.

«Վարպետը 1940 թվականի ամռանը եղավ Ախալցխայում: Այցելեց նաեւ գյուղերը: Ամառային գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանն էր, եւ հասկա-

նալի է, որ կոլտնտեսականները գտնվում էին հանդերում եւ այգիներում: Գյուղերից մեկում հանդիպումը բանաստեղծի հետ կայանում է դաշտում, սաղարթախիտ ծառի տակ: Հանդիպմանը մասնակցում է ողջ գյուղը: Բանաստեղծի երկրպագուները, պարզապես հարցախեղդ են անում սիրելի գրողին: Եւ ահա տարօրինակ հարց է տալիս մի գեղջկուհի.

- Վարպե՛տ, - ասել է նա, - ինչո՞ւ 1905 թվականին դուք ընկաք Հռոմսիմի գիրկը...

Դայթել է ծիծաղը: Վարպետն անմիջապես կռահել է, որ խոսքը վերաբերում է հոռետեսություն բառին եւ գեղջկուհին հարց է տվել ինչ-որ մեկի թելադրանքով, որ պետք է հասկանալ այսպես. ինչո՞ւ դուք 1905 թվականին ընկաք հոռետեսության գիրկը: Եւ բանաստեղծը պատասխանել է իրեն հատուկ հումորով.

- Ի՞նչ արած, հարգելի՛ս, քո գիրկն ընկնել չհաջողվեց, ես էլ ստիպված ընկա Հռոմսիմի գիրկը...»:

Այս գիրքը բազում արժանիքների կողքին ունի մի յուրօրինակ արժանիք եւս. գիրքն ընթերցելիս խաղաղություն է իջնում վրադ. խոսքը մաքուր է, բնական, պատկերները՝ թափանցիկ-տեսանելի, շունչը՝ կռվի տեսարանների մեջ անգամ բանաստեղծական, կարոտը՝ ապրեցնող, եւ բարությունն անսահման... Նրա մտածողության ու տողերի հյուսվածքներում տեսանելի վրձնահարվածներով իր ծննդավայրի՝ Ջավախք աշխարհի շունչն ու պատկերն է. մանկության վառ ու գունագեղ հուշերը միահյուսվելով ծերունազարդ գրողի մայրամուտյան շողերի հետ մի ամբողջ կենսապարածք են բացապարզում, որտեղից սկիզբ առած թրթիռները բերում մեզ են հասցնում Ջավախք աշխարհի շողշողուն արեւը, նահապետական գյուղի ոտուփեշին շուլալված նախաստեղծ մաքրությունը, կտուրների վրա կնճռ կապած թոնրատների լավաշաբույր ծուխը, աշխարհը շալակած տանող հայրերի ջլապինդ կորովն ու մայրերի հեզաբարո վարքը, ամայի դաշտերի վրա քրիստոնյա խաղաղությամբ ծփացող լռությունը, անձրեւների մազգզուզ ճոճքն ու իրենց լռության մեջ լեզվանի դարձած աղբյուրների փափուկ կարկաչը, ցորենով լի ամբարների համր գոհությունը, սառնամանիքից եղյամ կապած ապակիների անթափանց թափանցիկությունը, Աբուլի վերձիգ խոյանքն ու Փարվանայի ալիքների մանրիկ քչփչոցը... Կարդում ենք գրողի ստեղծագործությունները, եւ նրա կարոտը փոխանցվում է մեզ, մեր հոգու հետ շուլալվում, մեր հոգին ջերմացնում ու դառնում է կարոտի եւ ճանաչողության դասագիրք: Սարոյանական մի անթաքույց հրճվանք կա նրա տողերի հյուսվածքներում, մեծարենցյան՝ «Տուր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական», ցնծություն, նվիրումի մի անսպառ մղում, որ խավարը լույսի ու չարությունը բարության է վերածում: Ահա Ջավախքի բարբառով համեմված կարոտի ու սիրո մի պայծառ շաղախ.

Ջավախք աշխարհք, քովդ կուքամ, որդուդ առջեւ քու գիրկդ բաց,
Ջահել էի, էիստիար եմ, դունա հետս խնդա ու լաց.
Ընտրիկ ես դու, իմ Ջավախք, թող Աբուլը ըլլի վկա,

Ախր քեզ պես անուշ աշխարհք սաղ աշխարհքում փնտրես՝ չկա...
Կարոտցել եմ մաքուր օդիդ, աղբրներուդ ծարվըցել եմ,
Հին սերերս չեն թազանա, չունքի քիչըմ պառվցել եմ...
Տարինե՛ըը, տարինե՛ըը չուչուսը, չուչուսը կուքան-կերթան,
Հըմը մտքես հե՛չ չեն էլլե աղջիկները մեր ծոկթան...
Աղջիկներուն սիրահարված մինչեւ իրենց ականջները,
Աղջիկներու մեծ սիրով են գուսան դառնում մեր մանչերը.
Չալե՛ք, տղա՛ք, երգեք դայդին, բացեք սեղան ճոխ ու կարգին,
Երգով պիտի ուրախանանք, երգով պիտի հաղթենք դարդին...

Լույս իջնի գերեզմանիդ, վարպե՛տ, մեր տաք ու պաղ օրերի հանգույն մեր խոսքը միմյանց հանդեպ հաճախ ճշմարտանման, բայց քո հասցեին միշտ եւ ամենուրեք ճշմարիտ է հնչել, քանզի ճշմարիտ նկարագրի ներկայությունը դու էիր ու քո հարցմունքը. «Ուզում եք լավ ապրե՞լ, թե՞ ճիշտ ապրել»: Եւ դա բարդի մեջ պարզի գիտակցումն էր, թե՝ մարմնավոր կյանքի խտացումն, ի վերջո, մահն է, հոգեւոր կյանքի խտացումը՝ լույսն ու հավիտենությունը: Իսկ մենք դեռ մոլորված էինք. լավ ապրելու հեռանկարում մեր միտքը թեպետ ձիավոր էր, բայց ափսոս, որ ձի չունեինք: Մենք մինչ ձի ճարելու փնտրտուքի մեջ էինք, ուրիշների քոսոտ յաբուները խփել սարն անցել էին արդեն: Եղած-չեղածն այս է. երկրի վրա հյուսված ու երկնքում շարունակվող հեքիաթ է: Եւ թեպետ մեր բաժին հեքիաթը պառավել էր դեռ ջահել չեղած, բայց հեքիաթը մնում է հեքիաթ, որ պատմում ու լսում ենք, գրում ու վեհանում ենք: Վկան այս առիթը. կարդում ես գիրքը եւ երախտագիտությունը լեզվանի մրմունջ է դառնում շուրթիդ. մեր խոնարհումն ու խնկարկումը՝ քեզ, սիրելի վարպետ, իսկ մեզ՝ քո երկրային վաստակով եւ երկնային օրհնությամբ զորեղանալու բարեբախտությունը:

ՎԱՀԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ